Տրդատ Մուշեղյան 10:54, 14 դկտ 2020

Ադրբեջան են վերադարձվել դիվերսանտներ Դիլհամ Ասկերովն ու Շահբազ Գուլիևը

Ադրբեջանցի դիվերսանտներ Դիլհամ Ասկերովն ու Շահբազ Գուլիևը, որոնք 2014 թվականին ներթափանցել էին Արցախի Քարվաճառ քաղաք և սպանել երկու հայի, վերադարձվել են Ադրբեջան: Այս մասին հայտնել է Ադրբեջանի ռազմագերիների, պատանդների և անհետ կորածների հարցերով զբաղվող պետական հանձնաժողովը:

Ըստ հանձնաժողովի տարածած հաղորդագրության՝ վերադարձվել են նաև Ադրբեջանի այլ քաղաքացիներ: Նշենք, որ արցախյան 2020թ. պատերազմից հետո հայկական և ադրբեջանական կողմերը համաձայնել են «բոլորը բոլորի դիմաց» սկզբունքով գերիների և պահվող այլ անձանց փոխանակման, թեև գործընթացը գաղտնի է արվում, և շատ հարցեր հանրության համար դեռևս անպատասխան են մնում:

Հիշեցնենք, որ 2014 թվականի ամռանը ադրբեջանական դիվերսիոն խմբի անդամներ Դիլհամ Ասկերովը, Շահբազ Գուլիևն ու Հասան Հասանովը ներխուժել էին Արցախի Քարվաճառ քաղաք, սպանել էին Արցախի Հանրապետության քաղաքացի, 17-ամյա Սմբատ Ցականյանին, ՀՀ քաղաքացի, 42-ամյա մայոր Սարգիս Աբրահամյանին, ինչպես նաև վիրավորել ՀՀ մեկ այլ քաղաքացու՝ Կարինե Դավթյանին: Դիվերսիոն խմբի անդամների ձերբակալման պահին Հասան Հասանովը դիմադրություն էր ցույց տվել և սպանվել: ԼՂՀ ընդհանուր իրավասության դատարանը Ասկերովին դատապարտել էր ցմահ, իսկ Գուլիևին՝ 22 տարվա ազատազրկման:

Դեկտեմբերի 14-ի առավոտյան վարչապետ Նիկոլ Փաշինյանը իր ուղերձում նշել էր, որ շատ շուտով սպասվում է հայ գերիների՝ պաշտոնապես հաստատված խմբի վերադարձի մեկնարկը: Այսօր՝ 18:40-ի սահմաններում էլ վարչապետի մամուլի քարտուղար Մանե Գևորգյանը ֆեյսբուքյան իր էջում գրել է. «Սպասում ենք մեր գերիների առաջին խմբի վերադարձին»:

Լուսանկարը հրապարակել է Ադրբեջանի պետական անվտանգության ծառայությունը / ձախից՝ Ասկերովը, աջից՝ Գուլիևը

Եթե գտել եք վրիպակ, ապա այն կարող եք ուղարկել մեզ՝ ընտրելով վրիպակը և սեղմելով CTRL+Enter